

ՀԱՄԱՆՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈԽԱՋԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

(Համանվանական չափանիշի զույգերի պատմական
զարգացման հիման վրա)

Գ. Վ. ՀԱԿՈԲՅԱՆ

Համանունությունը՝ երկու կամ ավելի բառերի ձևային նույնությունը և իմաստային տարբերությունը, լեզուների ընդհանրական երևույթներից մեկն է։ Լեզվաբանական գրականության մեջ հանգամանորեն ուսումնասիրված են համանունների տեսակները (նույնանուններ, նույնագիրներ, նույնահունչներ, հարանուններ), նրանց առաջացման ուղիները (հնչյունափոխությունների տարբեր տեսակների, փոխառությունների, բազմիմաստության ճեղքման միջոցով), բայց նրանց պատմական զարգացումը, հատկապես տարածմանակյա փոխազդեցությունը, քիչ է արժանացել ուշադրության։ Հարցն այն է, որ համանուններն առանձնացվում են որպես այդպիսիք, լեզվական արժեք ունեն միայն որևէ լեզվի համաժամանակյա կտրվածքում, երբ բացաված չէ համանունների հանդես գալը միևնույն տեքստում, որտեղ ի հայտ են գալիս նրանց իմաստային տարբերությունները՝ անկախ ձևային նույնությունից։

Մեր ընտրած համանվանական զույգերը V դարի գրաբարի բառասլաշարի միավորներ են, ընդ որում, յուրաքանչյուր զույգի անդամներից մեկը ազգակցության տերմին է կամ ազգակցության անուն։ Այս իմաստային կողմը տվյալ դեպքում կարևոր է այնքանով, որ առիթ է եղել համանունների պատմական փոխազդեցության վրա ուշադրություն դարձնելու։ Ուսումնասիրելով հայերենի ազգակցության անունների զարգացումը՝ նեստեցինը, որ գրաբարում եղած և այժմ գործնական կիրառումից դուրս մղված բառերը բնութագրվում են մի շարք բացասական գործոններով, որոնցից մեկը համանվանական առկայությունն է։ Սակայն միաժամանակ կան գործնական կիրառումից դուրս մղված ազգակցության անուններ, որոնք V դարում համանուններ ունեցող ազգակցության անուններ, որոնց կիրառությունը շարունակվում է և այսօր։ Հետևաբար, համանվանական գոյությունը չի կարող մճռական ազդակ լինել և միայնակ պայմանավորել իր համանվանական դուրս մղումը կիրառությունից։ Իսկ ընդհանրապես ինչպե՞ս են փոխազդել այս համանունները՝ անկախ նրանց իմաստային կարգից։ Փոխազդեցությունը ներկայացնենք նախ քանական բնութագրերով. գրաբարյան նշված տասներկու համանվանական զույգերից ինը գործնականում վերացել են ժամանակակից հայերենում, այսինքն՝ շարունակում է կիրառվել համանուններից միայն մեկը, մյուս երեք համանվանական զույգերից մեկը պահպանվել է, մյուսը վերացել։ Իսկ դրանցից մեկի երկու անդամներն էլ վերածվել են հնաբանությունների։

Այս տվյալները բույց են տալիս, որ համանունների տարածմանակյա փոխազդեցությունն ընդհանուր առմամբ բացասաբար է ազդում նրանց հետագա գործնական կիրառության վրա։ Սակայն հնարավոր է արդյոք ընդա-

1 Տե՛ս Գ. Հակոբյան, Հայերենի ազգակցության անունների զարգացումը.—Հայերենագիտական միջազգային երկրորդ գիտաժողով, ղեկուցումների զրույթներ, Երևան, 1987, էջ 94—96։

մենք տասներկու հասանվանական զույգերի պատական ուսումնասիրության միջոցով հանգել ընդհանուր եզրակացությունների: Կարծում ենք, որ այդ, բանի որ համանուններն առանձնացվել են մոտ 700 ազգակցության անուններից, այսինքն՝ մոտ 700 բառային միավորներից միայն տասներկուսն ունեն համանուններ, ընդ որում ընտրվել են միայն դասական իմաստով բառային համանունները, այսինքն՝ պարզ արմատական կառուցվածք ունեցող բառերի ուղիղ, բառարանային ձևերի համընկնումները՝ իմաստային տարբերությունների դեպքում (անկախ համանունների ծագումից), այսպիսով, մեր ընտրանքից բացառվել են քերականական ու բառակազմական համանունները (օր. ուղի ազգակցության անվան համանունն է ուղ բառի եզ. սև. հոլմառ, միակնի (միակնի) «մեկ կին ունեցող» բառն ունի նույնիպիսի, ոչ նույնահունչ համանուն՝ «միաչքանի» նշանակությամբ, իսկ միակնի՝ դարձյալ «մեկ կին ունեցող» բառի համանուն բաղադրյալը նշանակում է «միայնակ, միակ». նշմ, հ. 2, 265 էջ), բանի որ դրանց փոխադրեցությունը շատ ավելի թույլ է, թեև նույնպես բացասական է:

Այստեղ ցույց տանք, թե մասնավորապես ինչով է պայմանավորված համանունների փոխադրեցությունը և ինչպիսի հետևանքներ է ունենում: Ընտրանքում հետևյալ ռուսերեն են՝ բաղված Հայկազյան և Արմատական բառարաններից:

ա) ՀԱԻ 1. պուպ, 2. ծայր, եզր, 3. թռչուն (ընդգծվում է ժամանակակից հայերենում պահպանված համանունը):

բ) ՀՈՐ 1. փեսա, դստեր ամուսին, 2. փուս:

դ) ԵՐԷՅ 1. մեծ, ավագ, 2. Բահանա (բարբառներում գործածվում է «բահանա» նշանակությամբ համանունը, իսկ երեց բառը գրաբարյան սակավ կիրառական փոխառություն է ժամանակակից հայերենում):

դ) ՊԵՏԱԿ 1. ապօրինի կամ խորթ զավակ, 2. երկտոդ² (հունական փոխառություն), 3. պիտանի (ռմկ., նշմ, հ. 2, էջ 649):

ե) ՍԵՐ 1. սերունդ, տոհմ. 2. կաթի սերուցք (3. կա նաև հարանուն՝ սլ. և, համակրանքի հոգր դասուցում իմաստով):

դ) ՏԻՏԱՆ 1. դայակ, ստնտու, 2. հսկա (հուն. փոխառություն):

է) ԿՈՅՍ 1. չամուսնացած աղջիկ, 2. կողմ (վերջինս պահպանվել է միայն բաղադրյալներում՝ կուսակցություն, կուսակալ են):

բ) ՄԱՅՐ 1. ծնող կին, 2. ծառատեսակ (այժմ կիրառվում է մայրի ձևով՝ նույն նշանակությամբ, բարբառներում՝ մերի ձևով, «անտառ» նշանակությամբ), 3. խավար (պահպանվել է բաղադրյալներում՝ հիմնականում հնչյունափոխված ձևով՝ մայրամուտ, մուրել, մալախուղ են):

թ) ՆԾՐ 1. տաղերկին (պահպանվել է բարբառներում), 2. ռենք, մեջ (վերածվել է ածանցի՝ ներածել, ներգրավել են, ի՞ դարից հետո անկախ դործածություն չունի), 3. 600 տարվա դարաշրջան (ասոր. փոխառություն):

ժ) ԱՅՐ 1. տղամարդ, ամուսին, 2. քարայր (երկուսն էլ հնաբանություններ են, իսկ չեզոք բառաշերտում գործածվում են նրանց բաղադրյալները՝ ԼԻԻԿ բառը միայն արևմտահայերենում ու բարբառներում, քարայր՝ նաև արևելահայերենում):

ի) ՍՈՐ 1. անուշ ողորմարդ, 2. ղևաբույսի անուն (սակա՝ գործածական են ուլարարում, այժմ չեն կիրառվում ո՛չ գրականում, ո՛չ բարբառներում):

լ) ՏԱԼ 1. ամուսնու լույս, 2. «հաճեցե՛ք» նշանակությամբ բայի անորոշ

² Պիտակ համանուններից պահպանված միակ բառն այժմ գործածվում է ավելի մասնավոր նշանակությամբ՝ ապրանքին փակցված թղթի կամ գործվածքի փոքր կտոր, որը պարունակում է նրա սեղմ ընթացիկը: Պահպանված բառերից մասնակի իմաստափոխություններ են կրել նաև ներ (բարյուրներում գործածվում է միայն առաջերկինս իմաստով, իսկ դրա սերունդն է՝ ամուսնու մյուս էինս) և ուտ (որոշարում թռչունների և անասանկալի անվանում է, իսկ այժմ՝ ընտանի թռչունների միայն մի տեսակի) բառեր:

դերքալը: Սա մեր ընտրանքում միակ համանվանական զույգն է, որի անդամները կան և՛ գրաբարում³ և՛ ժամանակակից հայերենում ու բարբառներում: Միաժամանակ սա միակ զույգն է մեր ընտրանքում, որի անդամներից մեկը բայ է և խոսքում (գրավոր կամ բանավոր) հանդես է գալիս թե՛ ձևավերով, վերացնելով համանունությունը: Ընտրանքի մյուս համանունները գոյականներ են, բացառությամբ երեք՝ «ավագ», պիտակ՝ «պիտանի» ածականների և երեք՝ «ներս» մակբայի: Այսինքն՝ բացի վերջինից (որը վերածվել է ածանցի), մյուս համանունները շունեն գործառական մեծ տարբերություններ՝ հայերենում տարածված է ածականների գոյականական ու գոյականների որոշչային կիրառությունը: Իսկ համանունների փոխազդեցությունը, ինչպես և նրանց իմաստային տարբերակումը տեղի է ունենում կիրառության ոլորտում: Ընդունված է ասել, որ համանունները հեշտությամբ են տարբերվում խոսքաշարում, օր. Թողցէ այր զհայր իւր և զմայր իւր (ծնող կին). ֆորժամ արեգակն ի մայր մտանէր (խավար). Ահա ես բնակեմ ի տուն մայր փայտից (ծառատեսակ). (ՆՁԲ, հ. 2, էջ 201): Սակայն միշտ կարող են լինել այնպիսի խոսքաշարեր, որոնք հնարավորություն չեն տալիս տարբերակելու համանունները և անհրաժեշտ է դառնում տեքստի վերլուծությունը: Համանունները շփոթելի են լինում նաև բաղադրյալներում, օր. մայրամառ բառը ՆՁԲ-ում մեկնաբանվում է մայր ազգակցության տերմինի փոխք. «մայր հող» նշանակությամբ (ՆՁԲ, նույն տեղը), մինչդեռ խոսքաշարը թևադրում է «խավարամած, մռայլ» նշանակությունը (ԱՐՄ, հ. 3, էջ 248): Առհասարակ «ատավիզմ» տերմինը մեկնաբանվում է որպես հա՛՛՛ «ծայր. եզր» և հա՛՛՛ «պապ, նախնի» համանուններից սերված են:

Այսպիսով, համանունների շփոթման հավանականությունը միշտ կա և դրա համար անհրաժեշտ միակ պայմանը համանունների պատկանելությունն է նույն համաժամանակյա կտրվածքի նույն (չեզոք, ոճավորված են) բառաշարին: Իրարից միանգամայն տարբերվող նշանակություններ ունեցող համանունները⁴, ինչպես և այլ բառեր, իմաստային զուգորդումների մի քանի քայլի միջոցով կարող են կապվել, հետևաբար և հանդես գալ նույն տևրությունում, որը կարող է առիթ դառնալ շփոթումների ու թյուրիմացության: Բայց կան նաև այնպիսի համանուններ, որոնց նշանակություններն արդեն ունեն շփման եզրեր և որոշակի անհարմարություններ են ստեղծում: Հաղորդակցման ընթացքում, օր. ևա՛՛ պապ և եզր, համանունները պարունակում են ռեպրեզենտացիոն, տիտան՝ դայակ և հսկա, համանունները պարունակում են «անձ» իմաստությամբ, մայրամառը՝ գիշերվա խավարի իջնելու ժողովրդական ստուգաբանությամբ մեկնվում է որպես արևի՝ իր մոր մոտ գնալը ևն: Կան նաև համանուններ, որոնց իմաստները ոչ միայն շփման եզրեր չունեն, այլև տարօրինակ զուգորդումներ են առաջացնում, օր. ևա՛՛ պապ և թռչուն, սե՛՛ սերունդ և սերուցք, պիտակ՝ խորթ և պիտանի են: Իմաստով շփման եզրեր ունեցող կամ տարօրինակ զուգորդումներ առաջ բերող համանունները առիթ են դառնում հաղորդակցական անհարմարությունների և ստեղծում դրանցից խուսափելու միտում, որը կարող է տանել դեպի տրվյալ բառի կիրառության սահմանափակումը կամ պայմանավորել նրա գործնական կիրառության դադարեցումը, եթե հանդես են գալիս դրանց նպաստող այլ հանգամանքներ: Մյուս կողմից, լեզուն ոչ միայն հաղորդակցության միջոց է, այլ, նախ և առաջ, նշանային համակարգ, որն արտացոլում է իրա-

³ Տե՛ս գոյականի առաջին վկայությունը XIII դարից է, բայց տա հնգվորուպեան՝ բնիկ հայկական ծագում ունեցող բառ է, հետևաբար գործածվել է թե՛ V դարում և թե՛ ավելի վաղ, ոչ է ավանդվել հավանաբար սակավ կիրառականության սլատճառով (ծագումը տե՛ս ԱՐՄ, հ. 4, էջ 356):

⁴ Բառախաղ անեկդոտ է հորինվել անգամ տալ՝ գոյական և բայ, համանունների շփման միջոցով, իսկ այս համանունները մեր ընտրանքում առավելագույնս են զատված իրարից իմաստային ու գործառական բնութագրերով:

կանությունը Առավել պարզեցված ձևով կարելի է ասել, որ բառերը իրական առարկաների ու երևույթների պայմանական նշաններ են և ենթադրում են որոշակի նշագրություն, արտացոլման համարժեքություն: Ինչ խոսք. որ բառերը «հայկալին» նշագրություն ունեցող նշաններ չեն, ավելին, դրանց բացարձակ մեծամասնությունը բազմիմաստ է: Սակայն լեզվակիր հանրույթը բազմիմաստությունն ընկալում է որպես փոխկապակցված իմաստների շղթա. մի երևույթ, որը ոչ միայն չի խանգարում հաղորդակցման հստակությանը, այլև նպաստում է դրա արտահայտչականությանը: Մինչդեռ համանունները սուկսիսի «բազմիմաստ» նշաններ են, որոնց միջև չկա իմաստային կապ. իսկ վերջինիս ստեղծումը հղի է թյուրիմացություններով ու շփոթման համարձակությանը: Այսպիսով, համանունները մի կողմից անհարմարավետ են հաղորդակցման տեսակետից, մյուս կողմից իրենց «նշանային» բնույթով մեկուսի են կանգնած լեզվական համակարգի այլ բառային նշաններից: Այս երկու հանգամանքները ենթադրում են համանունների կասկածանքից մեկի դուրս մղումը կիրառումից, սակայն համանունությունը մնում է լեզվի ընդհանրական երևույթներից մեկը, բանի որ լեզվի զարգացումը շարունակ առաջացնում է նոր համանուններ (օր. բառ՝ «պտուղ, բարիք» բառը վերջերս ձևեր է բերել անգլիերենից փոխառված համանուն, որով անվանվում է պանդկասթրաբանային տիպի մի հաստատություն և ունի համանուն՝ բառ բառը):

Այժմ մի բանի խոսքով ներկայացնենք, թե ինչը կարող է նպաստել լատի կիրառության շարունակմանը կամ դադարեցմանը՝ համանվան տոկայության պայմաններում, բանի որ, ինչպես վերը նշվեց, միայն համանվան տոկայությունը բավարար պայման չէ բառի գործնական կիրառության դադարեցման համար, այլ միայն բարենպաստ հանգամանք:

Բառի կիրառականությանը նպաստում են. ա) անվանվող իրույթի կարևորությունը (օր. մայր՝ ծնող կին), բ) իմաստով համարժեք հոմանիշի բացակայությունը (մայր, հայ՝ թոշուն. գրաբարում չկա թոշունների դասի այլ տեսակային անվանում), գ) բառակազմական հնարավորությունների գոյությունը (որը հարակից հասկացությունները բաղադրյալներով արտահայտելու միջոց է), և դ) կիրառականակցելիական աղատությունը, կամ այսպես կոչված լայն արժեքականությունը: Վերջին երկու հանգամանքները բնութագրում են համանվանական զույգերի առավել «կենսոնական», պահպանված անդամներին:

Այսպիսով, համանունների պատմական փոխադրեցությունը բացասաբար է անդրադառնում դրանցից առնվազն մեկի՝ կիրառման հաճախականության վրա, որը, այլ նպաստավոր հանգամանքների տոկայությամբ, պայմանավորում է տվյալ համանունության վերացումը:

Համանունների պատմական փոխադրեցությունը լավագույնս արտահայտվում է ժայռի ու ջրի փոխաբերությամբ. յուրաքանչյուր «համաժամանակյա կտրվածքում» դրանք գոյատևում են առանց ակներև փոխադրեցության, սակայն տարբեր համաժամանակյա կտրվածքների համեմատությունից պարզվում է, որ «և» ջրի հունն է փոխվել և՛ ժայռի ձևը:

⁵ Ընտրանքում եղած համանուններից երեք բառ (սուր՝ ամուլ տղամարդ, սուր՝ ղեղաբույսի անուն, հոր՝ փեսա) դրաբարից էլ հայտնի են սակավաթիվ վկայություններով, և զրաբարի համաժամանակյա կտրվածքում սրանց փոխադրեցությունը դորձնականում բացառված է. այն ավարտվել է նախադրարարյան ջրչանում և V դարում այս բառերի բնութագիրը կարելի է դիտել որպես այդ փոխադրեցության արդյունք:

ИСТОРИЧЕСКОЕ ВЗАИМОДЕЙСТВИЕ ОМОНИМОВ

(На базе исторического развития 12 пар омонимов)

Г. В. АКОПЯН

Резюме

Историческое взаимодействие, в общем—и развитие омонимов, не привлекало внимания лингвистов, т. к. омонимичность, как одно из универсальных свойств языка, релевантна только в синхронных срезах функционирования языка. Диахроническое развитие исследуемых 12 слов, имеющих омонимы (из выборки 700 лексических единиц грабара, V в.), притом с исключением непервичных (словообразовательных и грамматических) омонимов, привело к потере омонимичности в 9 случаях, в 2 случаях по употреблению вышли оба омонима, и только 1 пара сохранила омонимичность в современном армянском языке. Историческое взаимодействие отрицательно сказывается на употребительности и жизнеспособности омонимов, что обусловлено наличием множества речевых ситуаций, а также производных слов, позволяющих семантически двоякую интерпретацию омонима (на чем основано множество каламбуров), обычно легко дифференцируемого в контексте.